Տ. ԿԻՐԱԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՒԹԵԱՆ
Վիրահայոց թեմի առաջնորդ



Տէր Կիրակոս եպիսկոպոս Դաւթեանը (աւազանի անունը՝ Գեւորգ) ծնուել է 1982 թ. մայիսի 20-ին Թբիլիսիում (Վրաստան)։

1988—1999 թթ. սովորել եւ աւարտել է Թբիլիսիի թիւ 104 միջնակարգ դպրոցը։

1999—2005 թթ.սովորել եւ աւարտել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգեան հոգեւոր ճեմարանը։

2005 թ. դեկտեմբերի 26-ին, ձեռամբ Գերշ. Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանի՝ ձեռնադրուել է սարկաւագ, եւ ծառայութեան է կոչուել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա աստուածաբնական կենտրոնում՝ որպէս գործավար-քարտուղար։

2006 թ. յունուարի 11-ին պաշտպանել է աւարտաճառ «Դրուագներ 6—7-րդ դարերի հայ-վրացական եկեղեցական փոխյարաբերութիւնների պատմութիւնից» թեմայով։

2006 թ. փետրուարի 5-ին, ձեռամբ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Կիրակոս աբեղայ։

2006 թ. մարտի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ ծառայութեան է կոչուել Վիրահայոց թեմում։

2006 թ. ապրիլի 1-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգէն եպս. Միրզախանեանի հրամանագրով նշանակուել է Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու եւ Աջարիայի հայութեան հոգեւոր հովիւ։

2008–2012 թթ. սպասաւորել է Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմում՝ որպէս Մելբուռնի Սուրբ Աստուածածին եկեղեցու հոգեւոր հովիւ։

2013–2015 թթ. որպէս փոխառաջնորդ ծառայել է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում։

2015–2019 թթ. ծառայել է Գեղարքունիքի թեմում՝ իբրեւ առաջնորդական տեղապահ։

2015 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ, բարեյաջող պաշտպանելով «հայկական եւ ռուսական եկեղեցական տօների ժողովրդական արարողութիւնների համեմատական քննութիւնը» վերտառութեամբ վարդապետական թեզը, ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճան։

2019 թ. յունիս 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ, ազատուելով Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահի պաշտօնից, ծառայութեան է կոչուել Վիրահայոց թեմում՝ որպէս առաջնորդական տեղապահ։

2022 թ. յունիսի 1-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ նշանակուել է Վիրահայոց թեմի առաջնորդ։

2023 թ. հոկտեմբերի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնադրուել է եպիսկոպոս։